# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 762 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 819-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

_

_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 762 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 819-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը` համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմակերպել մրցութային հանձնաժողովի կազմում հասարակական կազմակերպություններին ընդգրկելու գործընթացը:
3. Սույն որոշման հավելվածի 18-19-րդ և 77-79-րդ կետերը չեն տարածվում մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը երթուղիները սպասարկող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա, որոնց կողմից մրցույթով ընտրված ավտոբուսների փոփոխության դեպքում երթուղու սպասարկմանը ներգրավվող ավտոբուսների գնահատականը չպետք է ցածր լինի 16 միավորից:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N762 և 2007 թվականի հունիսի 21-ի «Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 819-Ն որոշումները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության 2020 թվականի**
**---------- -ի N -Ն որոշման**

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ**

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**
2. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ (այսուհետ՝ կանոնավոր ուղևորափոխադրումներ) իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր (այսուհետ՝ կազմակերպություն) ընտրելու գործընթացին առնչվող հարաբերությունները:
3. Սույն կարգը վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք ցանկություն են հայտնել մասնակցելու կանոնավոր ուղևորափոխադրումներ ընտրելու մրցույթներին (այսուհետ՝ մրցույթ):
4. Երթուղային ցանցը կազմակերպող մարմնի կամ դրա ղեկավարի անհատական իրավական ակտով՝ հրամանով կամ որոշմամբ (այսուհետ՝ ակտ) ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրոմներ իրականացնող կազմակերպություններ ընտրելու մրցույթ կարող է կազմակերպվել ինչպես առանձին, այնպես էլ միասնական երթուղիների խմբի համար:
5. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

***ավտոկայարանային (ավտոկայանային) ծառայություն՝*** կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ավտոբուսների (միկրոավտոբուսների) ըստ չվացուցակի երթերի կազմակերպման ու հաշվառման, ուղևորների տոմսավորման, հանգստի կազմակերպման, մեկնման և նստեցման, սանիտարահիգիենիկ և կենցաղային սպասարկման, ուղեբեռի պահպանման հետ կապված մատուցվող ծառայություն.

***երթուղու ավտոբուսի փոխարինում՝*** երթուղու սպասարկման գործում ներգրավված ավտոբուսի փոխարինումն այլ ավտոբուսով.

***երթուղու համալրում՝*** կանոնավոր փոխադրումների երթուղու չվացուցակում լրացուցիչ երթերի նախատեսման կամ երթուղու չվացուցակի հաստատված երթերի ամբողջական սպասարկման համար ավտոբուսի (ավտոբուսների) ներգրավում.

***պահուստային ավտոբուս՝*** ավտոբուս, որը կարող է օգտագործվել անսարքության, վարորդի հանգստի կամ այլ պատճառներով երթուղի (երթուղիներ) դուրս չեկած ավտոբուսի փոխարեն:

1. **ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

1) միջմարզային և ներմարզային ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր ուղևորափոխադրումների դեպքում՝ չորս ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից (այսուհետ՝ լիազոր մարմին), մեկական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից (այսուհետ՝ Ճանապարհային ոստիկանություն), համապատասխան մարզպետարանից և

հասարակական կազմակերպությունից.

2) ներհամայնքային ավտոբուսային (միկրոավտոբուսային) կանոնավոր ուղևորափոխադրումների դեպքում՝ չորս ներկայացուցիչ համապատասխան համայնքապետարանից (Երևան քաղաքում՝ քաղաքապետարանից), մեկական ներկայացուցիչ լիազոր մարմնից, Ճանապարհային ոստիկանությունից և հասարակական կազմակերպությունից:

6. Հանձնաժողովներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգի պահանջներով:
7. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:
8. Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի կազմից նշանակում է քարտուղար, որը Հանձնաժողովի անդամի պարտականություններից բացի, իրականացնում է մրցույթ անցկացնելու նախապատրաստական, ինչպես նաև Հանձնաժողովի անդամներին մրցույթ անցկացնելու օրվա, ժամի և վայրի մասին մրցույթից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնելու, նիստերն արձանագրելու և մրցույթին առնչվող նյութերը պահպանելու աշխատանքները:
9. Հանձնաժողովը՝

1) նախապատրաստում և Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի հաստատմանն է ներկայացնում մրցույթ անցկացնելու ժամանակացույցը, որը հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մեկ օրինակը ներկայացնում է լիազոր մարմնին (բացառությամբ լիազոր մարմնի կողմից հաստատված մրցույթների անցկացման ժամանակացույցի).

2) ըստ հաստատված ժամանակացույցի՝ կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների, ինչպես նաև նոր բացված կամ թափուր մնացած երթուղիներ սպասարկելու իրավունք հատկացնելու համար հրապարակայնորեն հայտարարում է մրցույթ (Ձև N 1).

3) ընդունում է մրցույթին մասնակցելու փաստաթղթերի փաթեթները՝ համապատասխան գրառում կատարելով գրանցամատյանում (Ձև N 3), իսկ կազմակերպությանը տրամադրում տեղեկանք փաթեթը հանձնելու մասին (Ձև N 4).

4) որոշում է ներկայացված Ձև 1-ի ցանկով սահմանված փաստաթղթերի համապատասխանությունը, իրականացնում մրցույթին մասնակցող կազմակերպությունների  ավտոբուսների կամ  միկրոավտոբուսների (այսուհետ՝ ավտոբուսներ) գնահատում.

5) ամփոփում է մրցույթի արդյունքները, որոշում մրցույթը հաղթողին և երթուղին սպասարկելու իրավունք հատկացնելու ժամկետը՝ ըստ սույն կարգի 64-րդ կետի.

6) Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի

հաստատմանն է ներկայացնում մրցույթ անցկացնելու, ինչպես նաև նախկին մրցույթը հաղթող կազմակերպությունների՝ համալրելու և (կամ) փոխարինելու համար ներկայացված ավտոբուսների վերաբերյալ արձանագրությունները.

7) Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի մրցույթի մասնակից կազմակերպություններին:

10. Մրցույթ անցկացնելու ժամանակացույցը կազմվում է մեկ տարվա համար, այն պետք է հաստատվի մինչև նախորդող տարվա նոյեմբերի 1-ը: Մրցույթ անցկացնելու ժամանակացույցը հաստատվելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է լիազոր մարմնի, ինչպես նաև Հանձնաժողովը կազմավորող մարմնի պաշտոնական կայքէջերում:
11. Հանձնաժողովն իրավազոր է կատարել սույն կարգով իրեն վերապահված աշխատանքները, եթե մասնակցում է Հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

## III. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ

12. Հանձնաժողովը մրցույթ անցկացնելու մասին տեղեկությունը հրապարակում է «azdarar.am» կայքէջում, լիազոր մարմնի և Հանձնաժողովը կազմավորող մարմնի պաշտոնական կայքէջերում՝ մրցույթ անցկացնելու օրվանից առնվազն 30 աշխատանքային օր առաջ՝ նշելով՝

1) մրցույթ անցկացնելու օրը, ժամը և վայրը,

2) մրցույթին ներկայացված երթուղիների ցանկը, երթուղիների սկզբնակետերը և վերջնակետերը, երթուղին սպասարկելու համար պահանջվող ավտոբուսների (ներառյալ՝ պահուստային ավտոբուսները) քանակը և տեսակը,

3) մրցույթի մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

4) փաթեթը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը,

5) փաթեթը բացելու օրը,

6) հղում՝ երթուղիների չվացուցակներին ծանոթանալու համար,

7) հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար:

13. Երթուղին սպասարկելու իրավանքի ժամկետի ավարտի կապակցությամբ հերթական մրցույթն անցկացվում է նախորդ մրցույթում հաղթած կազմակերպության համար սահմանված ժամկետը լրանալուց 30 օր առաջ:

1. **ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**
2. Մրցույթին կարող են մասնակցել ըստ Ձև 2-ի լրացրած հայտը և ըստ Ձև 1-ի ցանկի անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրած այն կազմակերպությունները, որոնք ունեն՝

1) երթուղին սպասարկելու համար սույն կարգով պահանջվող քանակով սեփականության և (կամ) օգտագործման իրավունքով ձեռք բերված և Ճանապարհային ոստիկանությունում հաշվառված ավտոբուսներ, որոնցից առնվազն 50 տոկոսը ձեռք են բերված ֆինանսական վարձակալության պայմանագրով (այսուհետ՝ լիզինգ) կամ սեփականության իրավունքով: Ընդ որում կազմակերպությունները պետք է ապահովեն տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին համապատասխանող ավտոբուսներ, որոնց նվազագույն քանակը սահմանում են Հանձնաժողովները.

2) սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող հավաքակայան, որը պետք է ապահովի կազմակերպության ավտոբուսների կայանատեղերի մակերեսն ու դրանց նախաուղերթային տեխնիկական զննումը կատարելու համար համապատասխան դիտափոսերի երկարությունը՝ ըստ Աղյուսակ 1-ի: Կազմակերպությունները հավաքակայանին ներկայացվող անհրաժեշտ պայմանները կարող է ապահովել նաև պայմանագրային հիմունքներով.

Աղյուսակ 1

| NN ը/կ | Ավտոբուս (առանց վարորդի նստատեղի) | Կայանատեղի մակերես՝ ամեն մի ավտոբուսի համար ($մ^2$) | Դիտափոսի երկարություն (մ) |
|---|---|---|---|
| 1. | 9-ից 17 նստատեղ ներառյալ | 25.3 | 6.0 |
| 2. | 18-ից 30 նստատեղ ներառյալ | 39.5 | 11.0 |
| 3. | 31-ից 40 նստատեղ ներառյալ | 46.0 | 14.0 |
| 4. | 40-ից ավելի նստատեղ | 55.2 | 21.0 |

3) ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ

կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

----------------------------------------------------------------------------------------------------------

15. Սույն կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները չեն վերաբերում 1-3 ավտոբուս (ներառյալ պահուստային ավտոբուս) ունեցող կազմակերպություններին, որոնք վարորդների նախաուղերթային բուժզննությունը և ավտոբուսների նախաուղերթային զննությունը կարող են ապահովել պայմանագրային հիմունքներով, իսկ գյուղական բնակավայրերից երթուղին սպասարկող ավտոբուսների մեկնումն իրականացվելու դեպքում՝ ավտոբուսների տեխնիկական սպասարկման, ընթացիկ նորոգման և տեխնիկական վիճակի ամենօրյա նախաուղերթային զննման աշխատանքները կարող են կատարել դրանց վարորդները:
16. Մեկից ավելի երթուղիներ սպասարկելու իրավունք հատկացնելու (բացառությամբ Երևանի քաղաքի ներհամայնքային երթուղիների) համար կազմակերպված մրցույթին նույն ավտոբուսը կարող է ներկայացվել որպես պահուստային, եթե՝

1) նշված երթուղիները միանման են՝ միջմարզային, ներմարզային կամ ներհամայնքային և նույնատեսակ են (ավտոբուսային կամ միկրոավտոբուսային).

2) ապահովվում է սույն կարգի 20-րդ կետով նախատեսված պահուստային ավտոբուսի (ավտոբուսների) քանակը:

17. Սույն կարգի պահանջները տարածվում են նաև գյուղական բնակավայրերի վարչական տարածքներից իրականացվող կանոնավոր ուղևորափոխադրումներին, որտեղ երթուղին սպասարկող ավտոբուսների երթերի կատարման հաջորդականությունը պահպանելու պարտականությունները մինչև մոտակա ավտոկայարան, ավտոկայան կամ երթակարգավարական կետ հասնելը կատարում է երթուղին սպասարկող կազմակերպությունը:
18. Մրցույթին, ինչպես նաև համալրելու և (կամ) փոխարինելու համար թույլատրվում է ներկայացնել 5-ից ոչ ավել տարիք ունեցող ավտոբուսներ:
19. 10 տարին լրացած ավտոբուսներն ենթակա են պարտադիր փոխարինման:
20. Երթուղին (երթուղիները) սպասարկելու համար անհրաժեշտ ավտոբուսների քանակը սահմանվում է հաստատված չվացուցակով, սպասարկելու համար անհրաժեշտ ամեն 1-7 (այդ թվում՝ ամեն ոչ լրիվ յոթնյակի համար) ավտոբուսի դեպքում՝ մեկ պահուստային ավտոբուսի հաշվարկով:
21. Երթուղիներում շահագործվող ավտոբուսներն այլ երթուղիներ սպասարկելու իրավունք հատկացնելու մրցույթին կարող են մասնակցել

պայմանով, որ այդ ավտոբուսները Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի ակտով հանվել են նախկին երթուղին սպասարկելուց կամ կհանվեն նոր մրցույթում հաղթող ճանաչվելու դեպքում:

22. Մրցույթին կարող են մասնակցել նաև այն կազմակերպությունները, որոնք ներկայացրել են երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ քանակով առնվազն մեկ տարվա արտադրության ավտոբուսներ՝ սեփականության իրավունքով և (կամ) լիզինգով ձեռք բերելու մասին հայտ-պարտավորություն (N 12 Ձև), սեփականության իրավունքով ձեռք բերվող ավտոբուսների ընդհանուր արժեքի 100 տոկոս գումարի չափով երաշխիք (N 13 Ձև) և առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրելու փոխադրավարձի վերաբերյալ տեղեկություն՝ սոսնձված և ստորագրված ծրարով:
23. Սույն կարգի 22-րդ կետով նախատեսված դեպքերում ավտոբուսների գնահատումն իրականացվում է ներկայացված տեխնիկական բնութագրերի համաձայն:
24. Մրցույթին, համալրելու կամ փոխարինելու ներկայացված բոլոր ավտոբուսները պետք է հագեցած լինեն տեղորոշման և վթարային ազդարարման սարքերով:

1. **ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԸ**
2. Կազմակերպությունները մրցույթի մասին հայտարարության ցանկով նախատեսված փաստաթղթերը ներկայացնում են սոսնձված և ստորագրված ծրարով (այսուհետ՝ փաթեթ):
3. Փաթեթը ներառում է նաև փակ ծրար, որով ներկայացվում է երթուղին սպասարկելու համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրելու փոխադրավարձը: Միջմարզային և ներմարզային երթուղիների համար մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրելու փոխադրավարձը նշվում է ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:
4. Մրցույթի մասնակիցները կարող են փոխել կամ հետ վերցնել փաթեթները մինչև փաթեթները ներկայացնելու վերջնաժամկետի ավարտը:
5. Փաթեթների ընդունումը դադարեցվում է մրցույթ անցկացնելու օրվանից 5 աշխատանքային օր առաջ: Փաթեթները ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված նոր փաթեթների ընդունումը մերժվում է, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է կազմակերպությանը՝ նշելով մերժման հիմքը:
6. Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է նույնիսկ մեկ կազմակերպություն:
7. Փաթեթները բացվում են մրցույթի մասին հայտարարությամբ նախատեսված օրը և ժամին՝ Հանձնաժողովի հատուկ նիստում, որը նշանակվում է փաթեթներն ընդունելու վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը: Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպությունից պահանջել փաթեթում ներկայացված փաստաթղթի բնօրինակը:
8. Փոխադրավարձ պարունակող ծրարը չի բացվում: Այն բացվում է

մրցույթի արդյունքներն ամփոփելու ժամանակ:

9. Կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել իրենց կազմակերպության ներկայացած փաթեթները բացելու Հանձնաժողովի հատուկ նիստին:
10. Փաթեթներում թերություններ լինելու դեպքում Հանձնաժողովը դրանք հայտնաբերելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է կազմակերպություններին վերացնել թերությունները:
11. Հայտնաբերված թերությունները կազմակերպությունները կարող են վերացնել մինչև մրցույթ անցկացնելու նախորդող օրվա ժամը 12:00-ը: Կազմակերպությունները սույն կետով սահմանված ժամկետում եթե չեն վերացնում փաթեթներում առկա թերությունները, ապա մրցույթին մասնակցելու իրավունք չեն ստանում:

1. **ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

35. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մրցույթի ներկայացված ավտոբուսներին տված գնահատականները լրացնում է մրցութային թերթիկում (Ձև N 5):
36. Ավտոբուսները գնահատում են սույն կարգի 41-րդ կետով սահմանված գնահատման չափորոշիչներով:
37. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած ավտոբուսը ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:
38. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշման N 2 հավելվածի տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկում նշված ակնհայտ անսարքությունների և պայմանների առկայության դեպքում ավտոբուսն ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:
39. Հանձնաժողովի անդամները գնահատում են ելնելով ավտոբուսի փաստացի վիճակից,գնահատումն ամփոփվում է միջին գնահատականով:
40. Մրցութային թերթիկում գրանցվում են՝

1) 1-5-րդ սյունակներում՝ ավտոբուսի հերթական համարը և ավտոբուսը բնութագրող ընդհանուր տվյալները (հաշվառման համարանիշը, դեղին հիմնագույնի համարանիշը (առկայության դեպքում), մակնիշը, նույնացման (VIN) համարը, նստատեղերի թիվը),

2) 6-13-րդ սյունակներում՝ ավտոբուսի պատկանելիության իրավունքի, մակնիշի, թողարկման տարեթվի, արտաքին տեսքի, ուղևորասրահի, օդափոխման համակարգի, վառելիքի տեսակի և լրացուցիչ չափանիշների,

3) 14-րդ սյունակում՝ ավտոբուսների ընդհանուր գնահատականը, որը ձևավորվում է 6-13-րդ սյունակների գնահատականների գումարից:

41. Մրցութային թերթիկի 6-13-րդ սյունակներում ներկայացված տվյալները գնահատվում են ըստ հետևյալ չափորոշիչների՝

| Գնահատման չափորոշիչները | Գնահատականը |
| --- | --- |
| **1** | |
| **1. ԱՎՏՈԲՈՒՍ** | |
| ***1) Պատկանելության իրավունք*** ՝ | |
| սեփականություն, լիզինգ | 10 |
| Վարձակալություն | 5 |
| ***2) Մակնիշ*** Տնտեսական Համագործակցության և Զարգացման կազմակերպության (OECD) անդամ հանդիսացող պետություններ, Հայաստանի Հանրապետություն | 10 |
| ԱՊՀ և ԵԱՏՄ երկրներ | 5 |
| Այլ պետություններ | 1 |
| ***3) Արտադրության տարեթիվ***՝ | |
| մինչև 1 տարին ներառյալ | 10 |

| | |
|---|---|
| 1-ից 2 տարին ներառյալ | 8 |
| 2-ից 3 տարին ներառյալ | 6 |
| 3-ից 4 տարին ներառյալ | 4 |
| 4-ից 5 տարին ներառյալ | 2 |
| ***4) արտաքին տեսք*** | |
| թափքի դեֆորմացիաների բացակայություն | 0-2 |
| թափքի կոռոզիայի, ներկվածքի վնասվածքների բացակայություն | 0-2 |
| հողմապակու ճաքերի բացակայություն | 0-2 |
| ***5) ուղևորասրահ*** | |
| նստարանների, կողային պաստառների վնասվածքների բացակայություն | 0-2 |
| հատակի ծածկույթի վնասվածքների բացակայություն | 0-2 |
| ավելի նստատեղի և արտադրող գործարանի կողմից չնախատեսված այլ կառուցվածքային փոփոխությունների բացակայություն | 0-2 |
| ***6) օդափոխանակման համակարգ*** | |
| կլիմա համակարգ | 4 |

| | |
|---|---|
| Օդորակիչ | 2 |
| օդափոխիչ դռնակ, ուղեսրահում շարժական ապակիներ | 1 |
| ***7) վառելիքի տեսակը*** | |
| էլեկտրական, հիբրիդային, ջրածնային | 3 |
| գազաբալոնային համակարգ | 2 |
| դիզել, բենզին | 1 |
| ***Լրացուցիչ*** | |
| Վայ Ֆայ (Wi Fi) անլար ինտերնետային կապի առկայություն | 1 |

42. Օդափոխիչ համակարգը (միաժամանակ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում գնահատվում է միայն առավելագույն միավորով չափանիշը):
43. Մրցույթին երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ ավտոբուսների քանակից ավելի ավտոբուս ներկայացվելու դեպքում ընտրությունը կատարվում է պահանջվող քանակին համապատասխան՝ առավելագույն բարձր գնահատականներ ստացած ավտոբուսներից:
44. Հանձնաժողովի անդամների կողմից գնահատման ընդհանուր արդյունքների միջինով 16 միավորից ցածր գնահատական ստացած ավտոբուսները հանվում են մրցույթից և չեն կարող մասնակցել՝ ըստ սույն կարգի պահանջների թույլատրելի գումարային միավորի (գնահատականի) ձևավորմանը:

45. Ավտոբուսների գնահատման արդյունքներով (ըստ մրցութային թերթիկի) 40 միավորից ցածր միջին գնահատական ստանալու պատճառով՝ երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ ավտոբուսների քանակը չապահովելու դեպքում կազմակերպությունը զրկվում է հետագա մրցակցությունից:
46. Մրցույթում հաղթող չճանաչվելու դեպքում, մրցույթ անցկացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի պահանջներին համապատասխան, հայտարարվում է նոր մրցույթ:
47. Սույն կարգով չկարգավորվող մրցույթին վերաբերող հարաբերությունները կարգավորվում են «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

**VII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

48. Հանձնաժողովի աշխատանքի արդյունքներն ամփոփվում են մրցութային ամփոփ թերթիկում (Ձև N 6):
49. Առավելագույն ընդհանուր միավորներ հավաքած մասնակիցը ճանաչվում է մրցույթը հաղթող:
50. Մրցույթի արդյունքներով հավասար ընդհանուր միավորներ հավաքելու դեպքում հաղթողը որոշվում է նշված գործոնների առաջնահերթությամբ՝

1) առաջարկել է նվազագույն փոխադրավարձ.

2) ներկայացրել է հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբեր նստեցնելուն և իջեցնելուն հարմարեցված կամ վերասարքավորված ավելի շատ ավտոբուսներ:

51. Մրցույթի արդյունքներով բոլոր գործոնների հաշվառմամբ հավասար միավորներ հավաքելու դեպքում հաղթողը որոշվում է Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, վերջինիս անհնարինության դեպքում՝ վիճակահանությամբ:
52. Մրցույթի արդյունքներով երկու և ավելի անձի հավասար միավորներ ստանալու դեպքում, հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:
53. Վիճակահանությունը կատարվում է Հանձնաժողովի ամփոփիչ նիստում, որին կարող են ներկա գտնվել մրցույթին մասնակցող հավասար միավորներ ստացած կազմակերպության լիազոր ներկայացուցիչը:
54. Վիճակահանությունը կազմակերպելու նպատակով Հանձնաժողովի քարտուղարը հավասար միավորներ ստացած կազմակերպությունների թվին համապատասխան պատրաստում է իրարից չտարբերվող թերթիկներ (այսուհետ՝ թերթիկ), որոնք ծալվում են և մետաղյա ամրակով ամրացվում այնպես, որպեսզի թերթիկում կատարված նշումը չերևա, որից հետո դրանք գցվում են վիճակահանության համար նախատեսված արկղը (այսուհետ՝ արկղ):

Թերթիկներում նշվում են վիճակահանությանը մասնակից կազմակերպությունների անվանումները:

55. Վիճակահանության մասնակից կազմակերպության ներկայացուցիչը (ըստ այբբենական հերթականությամբ) արկղից հանում է մեկ թերթիկ, որից հետո, բացելով թերթիկը և բարձրաձայն կարդալով գրվածը, այն հանձնում են Հանձնաժողովի  քարտուղարին: Թերթիկում նշված կազմակերպությունը ճանաչվում է մրցույթի հաղթող:
56. Վիճակահանության գործընթացն ավարտվում է բոլոր թերթիկներն արկղից հանելուց, բացելուց, կարդալուց և թերթիկները Հանձնաժողովի քարտուղարին հանձնելուց հետո:
57. Վիճակահանության արդյունքում հաղթող է համարվում այն կազմակերպությունը, որի անվանմամբ նշված թերթիկը առաջին է հանվում արկղից:
58. Վիճակահանության արդյունքներն ամփոփվում են Հանձնաժողովի ամփոփիչ նիստի արձանագրությունում:
59. Հանձնաժողովը մրցույթի արդյունքներն ամփոփում է մրցույթից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփիչ նիստի արձանագրությամբ, որը ստորագրում են Հանձնաժողովի անդամները:
60. Հանձնաժողովի կազմված ամփոփիչ նիստի արձանագրությունը Հանձնաժողովի անդամների կողմից ստորագրելու հաջորդող աշխատանքային օրը ներկայացվում է հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի հաստատմանը, արձանագրությունը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարը պարտավոր է ընդունել ակտ:
61. Մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը մրցույթի արդյունքների մասին տեղեկացնում է լիազոր մարմնին և ավտոկայարանային (երթակարգավարական) ծառայություն մատուցող կազմակերպությանը:
62. Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո մրցույթին առնչվող բոլոր փաստաթղթերն ամրակարվում են և պահպանվում տվյալ կազմակերպության կողմից երթուղու սպասարկելու իրավունքի ժամկետի ավարտից հետո 1 տարի:
63. Մրցույթի մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերի փաթեթի անհամապատասխանության հետևանքով մրցույթի մասնակցության իրավունքից զրկված, ինչպես նաև մրցույթում հաղթող չճանաչված կազմակերպությանը վերաբերող նյութերը Հանձնաժողովի կողմից պահպանվում են 3 ամիս, որից հետո դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արխիվացվում են:

## VIII. ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼԸ

64. Երթուղիները սպասարկելու իրավունքի ժամկետները սահմանվում են՝

| **Միջին միավոր** | **Երթուղին սպասարկելու իրավունքի ժ** |
| --- | --- |
| 40-ից 44-ը ներառյալ | 8 տարի |
| 45-ից 50-ը ներառյալ | 10 տարի |

65. Մրցույթը հաղթող կազմակերպության՝ երթուղին սպասարկելուց իրավունքից հրաժարվելու կամ այդ իրավունքից նրան զրկելու դեպքում վաղաժամկետ լուծարվում է նրա հետ կնքված սպասարկման պայմանագիրը և հայտարարվում է նոր մրցույթ: Մրցույթ հաղթող կազմակերպությունը երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու դեպքում այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնում է Հանձնաժողով կազմավորող մարմնին:

1. **ՉԿԱՅԱՑԱԾ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ**
2. 66. Մրցույթը կամ դրա մի մասը համարվում է չկայացած, եթե՝

1) հանձնաժողովն իրավազոր չէ, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ, որի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր հայտեր չեն ընդունվում և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով.

2) մրցույթին մասնակցելու համար ոչ մի հայտ չի ներկայացվել, կամ ներկայացված հայտում (հայտերում) առկա է սույն կարգով սահմանված հայտի մերժման հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած կազմակերպություններից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է նոր մրցույթ, որը հայտարարվում է մրցույթ անցկացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի պահանջներին համապատասխան.

3) կրկնակի կամ նոր մրցույթը համարվում է չկայացած, ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա հայտարարվում է նոր մրցույթ:

67. Սույն կարգի պահանջների խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

1. **ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ**
2. Լիազոր մարմինը մրցույթի արդյունքներն ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում ապահովում է մրցույթների արդյունքների հրապարակումը պաշտոնական կայքէջում:

1. **ԵՐԹՈՒՂԻՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՈՒՄ**
2. Մրցույթը չկայանալու, երթուղին սպասարկող կազմակերպությանը երթուղին սպասարկելու իրավունքից զրկելու, երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու կամ մրցույթում արդյունքում հաղթող չլինելու դեպքերում մինչև նոր մրցույթի անցկացնելն ու դրա արդյունքներն ամփոփելը, անհրաժեշտության դեպքում, երթուղու սպասարկումը կարող է իրականացնել Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի կողմից լիազորված այն կազմակերպությունը, որը (որոնք) երթուղու սպասարկման գործում կարող է (են) ներգրավել սույն կարգի պահանջներին համապատասխանող անհրաժեշտ քանակով ավտոբուսներ: Երթուղին ժամանակավոր սպասարկելու իրավունք ձեռք բերելու ցանկություն հայտնած կազմակերպություններից նախապատվությունը տրվում է սույն կարգի 41-րդ կետի չափորոշիչների գնահատման արդյունքով առավելագույն միավոր ստացած ավտոբուսներ ներկայացնող կազմակերպությանը:

## XII. ԴԵՂԻՆ ՀԻՄՆԱԳՈՒՅՆԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐ

70. Մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո Հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում Ճանապարհային ոստիկանություն` տեղեկանք է (Ձև N 7) ներկայացնում մրցույթով անցած ավտոբուսների հաշվառման համարանիշերի և հաշվառման վկայագրի փոխարեն ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշեր և ճանապարհային ոստիկանության կողմից սահմանված ձևի ժամանակավոր հաշվառման կտրոններ (այսուհետ` ժամանակավոր կտրոն) տրամադրելու համար:
71. Կազմակերպությունը մրցույթի արդյունքների մասին տեղեկացվելուց հետո սպիտակ հիմնագույնի համարանիշը, համարանիշ տալու համար պետական տուրք վճարելու անդորրագիրը և ավտոբուսը հաշվառելու համար սահմանված պարտադիր վճարի անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը ներկայացնում է Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում և ստանում դեղին հիմնագույնի համարանիշ և ժամանակավոր կտրոն: Ճանապարհային ոստիկանությունը դեղին հիմնագույնի համարանիշը և ժամանակավոր կտրոնը տրամադրում է համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
72. Ճանապարհային ոստիկանությունը դեղին հիմնագույնի համարանիշը և ժամանակավոր կտրոնը կազմակերպությանը տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան Հանձնաժողով է ներկայացնում տեղեկություն` նշելով ավտոբուսների հաշվառման համարանիշերը:
73. Երթուղին սպասարկելու ընթացքում ավտոբուսի փոփոխության (համալրման, փոխարինման, երթուղու սպասարկումից հանման, ինչպես նաև սեփականատիրոջ փոփոխության) դեպքում, Հանձնաժողովը Ճանապարհային ոստիկանություն է ներկայացնում

տեղեկանք (NN 8, 9, 10 Ձևեր)՝ կատարված փոփոխությունը համապատասխանաբար ձևակերպելու:

74. Ավտոբուսի հիմնական կամ դեղին հիմնագույնի համարանիշեր հանձնելու և ստանալու ժամանակ ավտոբուսը Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում ներկայացնել չի պահանջում:
75. Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ավտոբուսները փոխարինելու կամ նույն երթուղում կանոնավոր ուղևորափոխադրումները տվյալ կամ մրցույթում շահած մեկ այլ կազմակերպության կողմից վերսկսվելու դեպքում այդ կազմակերպությունների ավտոբուսներին դեղին հիմնագույնի համարանիշերը հատկացվում են անվճար՝ երթուղին սպասարկող տվյալ կամ նախկին կազմակերպության կողմից դրանք վերադարձվելուց հետո 2 ամսվա ընթացքում, եթե դրանք պիտանի են հետագա օգտագործման:
76. Կազմակերպությունները դեղին հիմնագույնի համարանիշի ավտոբուսն այլ կազմակերպությանն օտարելու դեպքում ավտոբուսի հետ, նախկին սեփականատիրոջ համաձայնությամբ, նոր սեփականատիրոջը կամ վարձակալին են տրվում նաև դրանց համար տրված դեղին հիմնագույնի համարանիշերը, որի մասին Ճանապարհային ոստիկանության տվյալ ստորաբաժանումը կատարում է համապատասխան գրառում:
77. Երթուղին սպասարկելու իրավունքի ժամկետը լրանալու կամ վաղաժամկետ այդ իրավունքից զրկվելու դեպքում կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի կողմից տրված տեղեկանքով Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանում է հանձնում ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշերն ու ժամանակավոր կտրոնները և ստանում ավտոբուսի հիմնական համարանիշերն ու հաշվառման վկայագրերը:

## XIII. ԵՐԹՈՒՂՈՒ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԱՆՑԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

78. Երթուղին սպասարկելու իրավունք ձեռք բերած կազմակերպության առաջարկությամբ՝ Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի ակտի հիման վրա թույլատրվում է՝

1) երթուղին սպասարկելու համար համալրման կարգով ներգրավել ավտոբուս.

2) երթուղում ընդգրկված ավտոբուսները սույն կարգի պահանջներին համապատասխան փոխարինել համարժեք ավտոբուսներով.

3) երթուղին սպասարկելուց հանել պահուստային ավտոբուսը պայմանով, որ այն չի խոչընդոտի երթուղու բնականոն աշխատանքը և հանված ավտոբուսի փոխարեն մեկամսյա ժամկետում Հանձնաժողովի գնահատմանը կներկայացվի համարժեք ավտոբուս:

79. Երթուղիներում ներգրավվող ավտոբուսների համարժեքությունը որոշում է Հանձնաժողովը՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:
80. Երթուղին սպասարկելու համար ներգրավվող ամեն ավտոբուսի

ստացած գնահատականի գումարային միավորը պետք է՝

1) համալրելու դեպքում համապատասխանի տվյալ երթուղու մրցույթի արդյունքներով ընտրված ավտոբուսների միջին գնահատականին կամ գերազանցի այն.

2) փոխարինելու դեպքում համապատասխանի կամ գերազանցի փոխարինվող ավտոբուսների գնահատված միավորը:

81. Երթուղին սպասարկող կազմակերպությունների կողմից համալրելու, փոխարինելու համար ներկայացված ավտոբուսի (ավտոբուսների)՝ սույն կարգով նախատեսված չափանիշները գնահատելու համար օրը նշանակվում է կազմակերպության դիմումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում:
82. Սպասարկման երկրորդ տարվանից սկսած համալրվող (փոխարինվող) ավտոբուսների գնահատված միավորները պետք է հաշվարկվեն՝ տարեկան 10 տոկոս նվազումը հաշվի առնելով:

## XIV. ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

83. Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավոր է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմնի, ինչպես նաև ավտոկայարանային ծառայություններ մատուցող, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ 15 աշխատանքային օրվա ընթացքում կնքել ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու գործընթացը կարգավորող համապատասխան պայմանագրեր՝ դրանցում ներառելով սույն կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն կնքված նախնական պայմանագրի դրույթները, հակառակ դեպքում երթուղին սպասարկելու իրավունքը փոխանցվում է տվյալ մրցույթում հաջորդ տեղը զբաղեցրած կազմակերպությանը: Տվյալ մրցույթում հաջորդ տեղն զբաղեցրած կազմակերպություն չլինելու դեպքում կազմակերպվում է նոր մրցույթ:

1. **ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**
2. Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) և Հանձնաժողովը կազմավորող մարմնի կամ դրա ղեկավարի ակտը կազմակերպությունը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## XVI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

85. Լիազոր մարմինն ամեն տարի իր պաշտոնական կայքէջում հրապարակում է Հանձնաժողովի (ների) աշխատանքին (ներին) մասնակցող հասարակական կազմակերպությունների ցանկը (այսուհետ՝ ցանկ)։ Հասարակական կազմակերպության ներկայացուցիչը Հանձնաժողովի կազմում ընտրվում է փոխատեղման սկզբունքով՝ ամեն մի մրցույթին ցանկում ընդգրկված հերթական հասարակական կազմակերպությունից։
86. 86. Հանձնաժողովի կազմում ընդգրկվող հասարակական կազմակերպությունների ցանկը հաստատում է լիազոր մարմինը։
87. Ցանկում ընդգրկվելու մասին հայտարարությունը լիազոր մարմինը հրապարակում է ամեն տարի մինչև նոյեմբերի 1-ը՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև տեղադրվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում։
88. Հայտարարության մեջ պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) դիմում ներկայացնելու վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն և դիմում ընդունելու հետ կապված պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) դիմում ընդունելու օրերը և ժամերը.

3) դիմում ներկայացնելու վերջնաժամկետը։

89. Դիմումներն ընդունվում են մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 1-ը։
90. Ցանկը կազմվում է մեկ տարվա համար և տեղադրվում լիազոր մարմնի պաշտոնական կայքէջում մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը։
91. Հասարակական կազմակերպությունների կողմից սույն գլխով սահմանված դիմում չներկայացնելու դեպքում Հանձնաժողովները կազմավորվում է՝ առանց հասարակական կազմակերպության։
92. 92. Հասարակական կազմակերպությունները դիմումները և կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնում են լիազոր մարմնին՝ համաձայն N 11 ձևի։
93. Ցանկը ձևավորվում է հասարակական կազմակերպությունների դիմումներով՝ ըստ ներկայացման հաջորդականության։
94. Ցանկը պարունակում է հետևյալ տվյալները՝

1) հասարակական կազմակերպության անվանումը,

2) հասարակական կազմակերպության գտնվելու վայրը,

3) հասարակական կազմակերպության լիազոր ներկայացուցչի վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը,անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն),

4) հասարակական կազմակերպության գործունեության բնույթը:

95. Հասարակական կազմակերպությունը որևէ տվյալ փոփոխվելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին:
96. Հասարակական կազմակերպությունը դիմումը ներկայացնում է մեկ լիազոր ներկայացուցչի համար:
97. Ներկայացված դիմումը մերժվում է, եթե ներկայացվել է սույն գլխի պահանջների խախտմամբ:
98. Դիմումը գրավոր մերժվում է լիազոր մարմնում դիմումը մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով դիմումը մերժելու հիմքերը:
99. Դիմումում և կից ներկայացված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հասարակական կազմակերպությանը 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:
100. Սույն կարգի 85-րդ կետով սահմանված հիմքերով դիմումը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիազոր մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հասարակական կազմակերպությունը չի վերացնում դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները:
101. Ամեն մի Հանձնաժողով մրցույթից 48 ժամ առաջ սույն կարգի 5-րդ կետի պահանջին համապատասխան ընտրում է մեկ հասարակական կազմակերպություն:
102. Հանձնաժողովի կազմում ընտրվելու մասին հասարակական կազմակերպության ներկայացուցիչը տեղեկանում է մրցույթն անցկացվելուց 24 ժամ առաջ:
103. Հանձնաժողովի կազմում ընտրված և ընդգրկված հասարակական կազմակերպության ներկայացուցիչը մրցույթի է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

_

_

_

***<u>Ձև N 1</u>***

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ**

**ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

__________________________________ հայտարարում է ընդհանուր օգտագործման

(մրցույթ հայտարարող մարմնի անվանումը)

ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

| ԵՐԹՈՒՂՈՒ՝ անվանումը և համարը | սկզբնակետը (ավտոկայարան, ավտոկայան, երթակարգավարական կետ) | վերջնակետը (ավտոկայարան, ավտոկայան, երթակարգավարական կետ) | տեսակը (ավտոբուսային/ միկրոավտոբուսային) | սպ... պա... ավ... (նե... պա... ավ... |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |

**Ց Ա Ն Կ**

**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1. Հայտ (Ձև N2):

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր, (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում` շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումը ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար վերասարքավորված ավտոբուսների համար լիազոր մարմնի կողմից տրամադրված վերասարքավորման թույլտվության մասին որոշում:
7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար` նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի տարածվում համայնքներում անցկացվող մրցույթների վրա):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը___________________________

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը ___________________________

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը
________________________

Հեռախոսահամարը` լրացուցիչ տեղեկություն ստանալու համար:

*Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում

***<u>Ձև N 2</u>***

**Հ Ա Յ Տ  N ______**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայտատու ___________________________________________________________

(կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցե)

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու 20  թ. ------------կայանալիք ավտոբուսային

_____________________ մրցույթին (համալրմանը, փոխարինմանը) __________________

(երթուղու անվանումը, համարը)

1. Ավտոբուսների մասին տվյալները`

| NN ը/կ | Մակնիշ | Հաշվառման* համարանիշ | Դեղին հիմնագույնի* համարանիշ (առկայության դեպքում) | Թողարկման տարեթիվ |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |

2. Լրացուցիչ տեղեկություններ` ______________________________________________

___________________________________________________________________

Նախապես ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային տրանսպորտի օրենսդրության պահանջներին  և պարտավորվում եմ ապահովել դրանց կատարումը:

Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ  սահմանված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

Հայտատու ________________ ___________________________________________

(ստորագրությունը)

_____ ________________________20  թ.

*չի լրացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում

–

–

–

***Ձև N 3***

**Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն**

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ (ՓԱԹԵԹՆԵՐԻ)**

| NN ը/կ | Մրցույթ անցկացնելու ամսաթիվ | Փաթեթ հանձնելու ամսաթիվ | Կազմակեր-պության անվանումը կամ անհատ ձեռնար-կատիրոջ անունը, ազգանունը | Երթուղու կամ երթուղիների անվանումը և համարը կամ համարները | Կազմակերպության (լիազորված ներկայացուցչի) կամ անհատ ձեռնար-կատիրոջ ստորա-գրությունը (լիազորված ներկայացուցչի) | Փաթեթն ընդունողի ստորա-գրությունը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | |

–

–

***Ձև N 4***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N**

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ (ՓԱԹԵԹՆԵՐԻ) ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը ___________

_______________________________________________________________

Գտնվելու վայրը կամ բնակության վայրը _____________________

Երթուղու անվանումը և համարը ____________________________

Փաթեթի հանձնման գրանցման մտից թիվը

_______ ____________________ 20 թ.

(փաթեթի հանձնման ամսաթիվը)

_______ ____________________ 20 թ.

(փաթեթի բացման ամսաթիվը)

Մրցութային հանձնաժողովի քարտուղար _____________ _______________________

(ստորագրությունը)

_

_

***Ձև N 5***

**Մ Ր Ց ՈՒ Թ Ա Յ Ի Ն Թ Ե Ր Թ Ի Կ**

**ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

Մրցութային հանձնաժողովի __________ _______________ ____ ______ 20 թ.

(պաշտոնը) (անունը, ազգանու

| Ավտոբուսի N | մակնիշ | հաշվառման համարանիշ | Դեղին հիմնագույնի համարանիշը (առկայության դեպքում) | նույնացման համարը | նստատեղերի թիվը | Գնահատականը՝ ըստ պատկանելիության իրավունքի | մակնիշի | արտադրման տարեթվի | արտաքին տեսքի | ուղևորասրահի | օդափոխման համակարգ | վա իքի եսւ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

Երթուղու անվանումը և համարը

1.

2.

3.

______________________ ____________________

(ստորագրությունը)

–

–

–

–

–

–

***Ձև N 6***

**Մ Ր Ց ՈՒ Թ Ա Յ Ի Ն  Ա Մ Փ Ո Փ  Թ Ե Ր Թ Ի Կ**

_____ ______________ 20  թ.

(մրցույթի անցկացման օրը)

| | | | |
|---|---|---|---|
| Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը | Ավտոբուսների | Հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները, գումարային գնահատականները | Ավտոբուս միջին միա վորը |

Երթուղու անվանումը և համարը

Մրցութային հանձնաժողովի ______________ ____________________
(ստորագրությունը) (անունը, ա

______________ ____________________
(ստորագրությունը) (անունը, ա

______________ ____________________
(ստորագրությունը) (անունը, ա

______________ ____________________
(ստորագրությունը) (անունը, ա

______________ ____________________
(ստորագրությունը)

***Ձև N 7***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N ___**

**____________ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԻ (ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ) ՄԱՍԻՆ**

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը ____________________________________________________________

Գտնվելու վայրը կամ բնակության վայրը ___________________________________

Երթուղու անվանումը և համարը _________________________________

Մրցութային հանձնաժողովի արձանագրության հաստատման մասին հանձնաժողովը կազմավորող մարմնի ակտի 20 թ. ______ ______ N ______________

| NN ը/կ | Երթուղին համալրող ավտոբուսի (միկրոավտոբուսի)՝ | | | | | Երթուղում աշխատելու համար սահմանված ժամկետ |
|---|---|---|---|---|---|---|
| | Մակնիշ | հաշվառման համարանիշ | դեղին հիմնագույնի համարանիշ (լրացվում է առկայության դեպքում) | նույնացման (VIN) համար | թողարկման տարեթիվ | |
| 1. | | | | | | |
| 2. | | | | | | |

Մրցութային հանձնաժողովի նախագահ _____________ ___________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Մրցութային հանձնաժողովի քարտուղար _____________ ___________________
(ստորագրությունը) (անունը,

_

_

_

_

***Ձև N 8***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N ___**

**_____________ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՐԹՈՒՂԻՆ ՀԱՄԱԼՐՈՂ ԵՎ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ ՀԱՆՎՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԻ ( ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ) ՄԱՍԻՆ**

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

_____________________________________________________________

Գտնվելու վայրը կամ բնակության վայրը ___________________________________

Երթուղու անվանումը և համարը __________________________________

Մրցութային հանձնաժողովի արձանագրության հաստատման մասին հանձնաժողովը կազմավորող մարմնի որոշման 20 թվականի N _____ _____ ____________

| NN ը/կ | Երթուղին համալրող ավտոբուսի (միկրոավտոբուսի)` | | | | | Երթուղում աշխատելու համար սահմանված ժամկետ |
|---|---|---|---|---|---|---|
| | մակնիշ | հաշվառման համարանիշ | դեղին հիմնագույնի համարանիշ | նույնացման (VIN) համար | թողարկման տարեթիվ | |
| 1. | | | | | | |

Նշված կազմակերպության կողմից հանձնման ենթակա է (են) երթուղու սպասարկումից հանված հետևյալ ավտոբուսների (միկրոավտոբուսների) ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշը (համարանիշերը):

| NN ը/կ | Երթուղու սպասարկումից հանվող ավտոբուսի (միկրոավտոբուսի)` | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մակնիշը | հաշվառման համարանիշը | դեղին հիմնագույնի համարանիշը | նույնացման (VIN) համարը | թողարկման տարեթիվը |
| 1. | | | | | |

Մրցութային հանձնաժողովի նախագահ ____________ __________________

(ստորագրությունը) (անունը, ա

Մրցութային հանձնաժողովի քարտուղար ____________ ___________________

(ստորագրությունը)

***Ձև N 9***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N ____**

**ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՑ ՀԱՆՎՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԻ (ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ) ՄԱՍԻՆ**

_________________ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից հանձնման ենթակա է (են) ___________________ երթուղու սպասարկումից հանված հետևյալ ավտոբուսների (միկրոավտոբուսների) ժամանակավոր դեղին հիմնագույնի համարանիշը (համարանիշերը):

| NN ը/կ | Երթուղու սպասարկումից հանվող ավտոբուսի (միկրոավտոբուսի)` | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մակնիշ | հաշվառման համարանիշ | դեղին հիմնագույնի համարանիշ | նույնացման (VIN) համար | թողարկման տարեթիվ |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |

Մրցութային հանձնաժողովի նախագահ _____________ _____________

(ստորագրությունը)

Մրցութային հանձնաժողովի քարտուղար _____________ _____________

(ստորագրությունը)

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

_

***Ձև N 10***

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք  N ____**

**ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ**
**ԱՎՏՈԲՈՒՍԻ (ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ) ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

____________________ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ սպասարկմանը հանձնված _________________________ երթուղու հետևյալ ավտոբուսների (միկրոավտոբուսների) սեփականատերը (սեփականատերերը) փոխվել է (են):

| NN ը/կ | Երթուղու սպասարկման գործում ներգրավված ավտոբուսի (միկրոավտոբուսի)` | | | | | Երթուղում աշխատելու համար սահմանված ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|
| | մակնիշը | նախկին հաշվառման համարանիշը | դեղին հիմնագույնի համարանիշը | նախկին սեփականատերը | նոր սեփականատերը | |
| 1. | | | | | | |
| 2. | | | | | | |

Տրվում է նշված ավտոբուսը (ավտոբուսները) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմիններում վերագրանցելու և հատկացված դեղին հիմնագույնի համարանիշը նույնը թողնելու համար:

Մրցութային հանձնաժողովի նախագահ ______________ ____________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Մրցութային հանձնաժողովի քարտուղար ______________ ____________________

(ստորագրությունը)

–

–

–

–

–

–

–

–

–

–

–

–

***<u>Ձև N 11</u>***

Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարար

պարոն________________________

(անունը, ազգանունը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Խնդրում ենք ____________________________________________-ը ընդգրկել

(հասարակական կազմակերպության անվանումը)

Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովների կազմերում ընդգրկվող հասարակական կազմակերպությունների ցանկում`

Դիմումի մեջ նաև նշվում են հետևյալ տեղեկությունները`

1) հասարակական կազմակերպության անվանումը,

2) հասարակական կազմակերպության գտնվելու վայրը,

3) հասարակական կազմակերպության լիազոր ներկայացուցչի վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը,անձնագրային տվյալները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն),

4) հասարակական կազմակերպության գործունեության բնույթը:

Դիմող`

______________________________

(անունը,
ազգանունը)

***Ձև N 12***

**Հ Ա Յ Տ - Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ**

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը ______________________________
Գտնվելու վայրը և հասցեն __________________________________________
Պետական գրանցման վկայականի համարը _______________________________
Հարկային մարմիններում գրանցման համարը _____________________________
Հեռախոսահամարը ___________________________________________

Պարտավորվում եմ երթուղային ցանցը կազմակերպող մյարմնի հետ կնքված ժամանակացույցի համաձայն, ձեռք բերել _______երթուղիների սպասարկման չվացուցակով փոխադրումներ իրականացնելու համար անհրաժեշտ _______ միավոր ____________ մակնիշի 20 __ թվականի արտադրության ավտոբուսներ:
Խնդրում եմ թույլատրել մասնակցելու նշված երթուղում (ներում) կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 20___ թ. _________ -ին կայանալիք մրցույթին:
Կից ներկայացնում եմ երաշխիք այն մասին, որ նշված ժամկետում ու մակնիշով և ______ թվականի արտադրության ավտոբուսներ մրցութային հանձնաժողովին չներկայացնելու դեպքում ___________ բանկում իմ կողմից N _____ հաշվեհամարում ներդրված գումարից _________________ հազ. դրամը (ձեռք բերվող ավտոբուսի ընդհանուր արժեքի 15 տոկոսի չափով գումարը) կփոխանցվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան եկամտային հաշվին՝ որպես պետությանը պատճառված վնասի փոխհատուցում:
Առդիր՝
1. Կազմակերպության պետական գրանցման վկայականը:
2. ______________________ __________ կողմից տրված երաշխիքը:

3.Ավտոբուսների տեխնիկական բնութագրերը և արժեքի մասին տեղեկատվությունը:

_______________ ___________________________
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_

_

_

***Ձև N 13***

**Ե Ր Ա Շ Խ Ի Ք**

**Հ Ա Յ Տ - Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Ն**

Քանի, որ _______________________________________________ (այսուհետ՝

Հայտատու կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը

կազմակերպություն) պարտավորվում է մինչև 20__թ. ____________________-ը ձեռք բերել _____________________________________

երթուղիների սպասարկման չվացուցակով փոխադրումներ իրականացնելու

համար անհրաժեշտ ___________________ միավոր ______________ դրամ

ընդհանուր արժեքով _________________________ մակնիշի _________ թվականի

արտադրության ավտոբուսներ, սույնով տեղեկացնում ենք, որ __________

(երաշխիք տված կազմակերպության անվանումը)

ունենալով ________ պետական գրանցում, պարտավորվում է,

(երկրի անվանումը)

որ մինչև 20__ թվականի _________ ամսվա վերջին օրը ___________________ կողմից ներկայացված հայտ-պարտավորությունով նախատեսված համապատասխան մակնիշով և քանակով ավտոբուսներ ձեռք բերված լինելու մասին մրցութային հանձնաժողովից տեղեկանքի չտրամադրման դեպքում կազմակերպության N _______ հաշվեհամարից _________________ դրամ (գումարը` բառերով) կփոխանցվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի N _____________ եկամտային հաշվին:
Երաշխիք տված կազմակերպությունն երաշխավորում է, որ կազմակերպության նշված բանկային հաշվեհամարի գումարի անբավարարության դեպքում, նշված գումարը կփոխանցի իր սեփական միջոցների հաշվին:
Երաշխիք տված կազմակերպությունը հավաստում է, որ սույն պարտավորությունը կվերաբերի նաև իր իրավահաջորդներին:

______________________________________________________
(Երաշխիք տված կազմակերպության անվանումը, հասցեն)

______________________________________________________
(Երաշխիք տված կազմակերպության ներկայացուցչի անունը, ազգանունը, ստորագրությունը)